

ԱՐՄՍՎԻՅԱՆԿ



ARMSWISSBANK

ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ



ARMSWISSBANK

ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025

Բովանդակություն

ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁ	05
ԲԱՆԿԸ	07
ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ, ՏԵՍԼԱԿԱՆ, ԱՐԺԵՔՆԵՐ	08
ՄԵՐ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ	10
ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	14
ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ	16
Վարկային գործիքներ և վարկային պորտֆել	16
Կորպորատիվ, այդ թվում ՓՄՁ վարկավորում	19
Նախագծային ֆինանսավորում	20
Անհատական վարկավորում	20
Առևտրի ֆինանսավորում և ֆակտորինգ	21
Վարկային ռիսկի կառավարում	22
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	24
Արժեթղթերով գործառնություններ և Արժեղթերի պորտֆել	24
Ներդրումային ծառայություններ	26
Արժույթային և ոսկով գործառնություններ	27
ՖԻՆԱՆՍՆԵՐ	28
ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ	29
Ավանդների ներգրավում	30
Համագործակցություն ֆինանսական կազմակերպությունների հետ	31
Սեփական պարտատոմսերի թողարկում	34
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	36
Բանկի տարեկան շահութաբերության ցուցանիշներ	37
ՄԱՐԴԻՎ	40
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ	41
ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ	43
ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	44
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ	47
ԱՆԿԱՆ ԱՌԴԻՏՈՐԱԿԱՆ ԷԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	49
ՕԳՏԱԿԱՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ	64
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	67

“

Բանկի գործադիր տնօրենի ուղերձը



Գևորգ Մաչանյան

ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅ,
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

Հարգելի բաժնեդերեր, հաճախորդներ և գործընկերներ,

2025 թվականը համաշխարհային և տարածաշրջանային շարունակվող փոփոխությունների, տնտեսական վերափոխումների և նոր մարտահրավերների պայմաններում դարձավ նաև նոր հնարավորությունների և կարևոր ձեռքբերումների տարի: Այս միջավայրում ԱրմՍվիսԲանկը շարունակեց հերևոդականորեն իրականացնել իր ուղևորությունը՝ պահպանելով ֆինանսական կայունությունը, ընդլայնելով միջազգային համագործակցությունը և նպաստելով Հայաստանի տնտեսության երկարաժամկետ ու կայուն զարգացմանը:

Հայաստանի բանկային համակարգը 2025 թվականին ևս պահպանեց իր կարևոր դերակատարությունը՝ որպես տնտեսության կայունության և զարգացման հենասյուներից մեկը: Թվայնացման, պարասխանաբար կառավարման և միջազգային ինտեգրման միտումները շարունակեցին ամրապնդվել՝ ձևավորելով մրցունակ և ժամանակակից ֆինանսական միջավայր: Այս պայմաններում ԱրմՍվիսԲանկը շարունակեց զարգանալ՝

հավաքարիմ մնալով իր հիմնական արժեքներին և հաճախորդակենտրոն մոտեցմանը:

2025 թվականը Բանկի համար առանձնացավ մի շարք նշանակալի ձեռքբերումներով: ԱրմՍվիս-Բանկը դարձավ Հայաստանում Կանաչ կլիմայի հիմնադրամի (GCF) կողմից հավաքարմագրված առաջին և միակ մասնավոր կառույցը՝ սրանալով ուղիղ հասանելիություն համաշխարհային կլիմայական ֆինանսավորման ամենափոշոռ աղբյուրներից մեկին: Շարունակվեց արդյունավետ համագործակցությունը Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD), Ասիական զարգացման բանկի (ADB), Եվրոպական ներդրումային բանկի (EIB), ինչպես նաև այլ միջազգային գործընկերների հետ:

Տարվա ընթացքում Բանկը Հայաստանի Հանրապետությունում առաջինն առաջարկեց Visa B2B Connect ծառայությունը բիզնես հաճախորդներին, միացավ ArcaPay համակարգին, անդամակցեց ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի ֆինանսական նախաձեռնությանը (UNEP FI), ինչպես նաև Partnership for Carbon Accounting Financials (PCAF) միջազգային նախաձեռնությանը՝ վերահասարակելով իր հանձնառությունը կայուն ֆինանսավորման և պարասիանաարու բանկային գործունեության սկզբունքներին:

Հայրկանչական է նաև, որ 2025 թվականին ԱրմՍվիս-Բանկը հրապարակեց իր առաջին Կլիմայական անցումային պլանը՝ դառնալով Հայաստանում առաջին ֆինանսական կառույցը, որն այս ուղղությամբ ներկայացրեց համապարփակ ռազմավարական փաստաթուղթ: Միաժամանակ Բանկի «Climate Intelligence: ArmSwissBank Leads Green» հաղորդակցական արշավը հաղթող ճանաչվեց հեղինակավոր IPRA Golden World Awards 2025 մրցանակաբաշխության «Climate Change and Literacy» անվանակարգում, որը միջազգային հարթակում ևս մեկ անգամ ընդգծեց մեր առաջարար դիրքը կայուն զարգացման և կլիմայական պարասիանաարության ոլորտում:

Միջազգային համագործակցության ուղղությամբ ևս արձանագրվեցին կարևոր արդյունքներ: Եվրոպական ներդրումային ֆոնդի (EIF)

հետ ստորագրված 20 միլիոն եվրոյի երաշխիքային գործիքը, որն առաջին նման համագործակցությունն էր Հայաստանում, նոր հնարավորություններ ստեղծեց փոքր և միջին ձեռնարկությունների և կանանց ձեռներեցության ֆինանսավորման համար: Բանկը նաև անդամակցեց Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի Բանկերի Ասոցիացիային (BACEE)՝ ընդլայնելով միջազգային համագործակցության աշխարհագրությունն ու փորձի փոխանակման հնարավորությունները:

Կորպորատիվ սոցիալական պարասիանաարվությունը շարունակում է մնալ Բանկի գործունեության կարևոր բաղադրիչներից մեկը: Մենք համոզված ենք, որ հաջողությունը չափվում է ոչ միայն ֆինանսական արդյունքներով, այլև հասարակության զարգացման մեջ ունեցած ներդրմամբ: Այդ սկզբունքով շարունակեցինք աջակցել կրթական, բնապահպանական և սոցիալական նախաձեռնություններին՝ խրախուսելով նաև աշխարակիցների ակտիվ ներգրավվածությունը:

Ամիտիելով զարին՝ կարող ենք վարահորեն նշել, որ արձանագրված արդյունքներն ու ձեռքբերումները հնարավոր են դարձել մեր թիմի մասնագիտական նվիրված աշխատանքի, հարակ ռազմավարության, ինչպես նաև բաժնեկերերի, հաճախորդների և գործընկերների շարունակական վարահության շնորհիվ:

Մենք սպագային նայում ենք վարահությամբ՝ շարունակելով կառուցել նորարար, պարասիանաարու և միջազգային լավագույն փորձին համահունչ ֆինանսական հասարակություն: Մեր առաջնահերթությունները մնում են անփոփոխ՝ լինել վարահելի գործընկեր, աջակցել Կայունության կայուն զարգացմանը և ստեղծել երկարաժամկետ արժեք մեր գործընկերների ու հաճախորդների համար:

Ծնորհակալություն եմ հայտնում Բանկի ողջ անձնակազմին, խորհրդին, բաժնեկերերին, հաճախորդներին և գործընկերներին՝ համարել հաջողությունների և շարունակական վարահության համար:

Բանկը

ԲԱՆԿԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԼԱԿԱՆԸ, ԱՐԺԵՔՆԵՐԸ

ԲԱՆԿԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հաճախորդներին մատուցել նորարարական, առաջադեմ և միջազգային շուկաներում ընդունված բանկային ծառայություններ՝ հմուտ և պրոֆեսիոնալ անձնակազմի շնորհիվ ու տրամադրել նրանց մեր ժամանակը և ռեսուրսները՝ հավատարիմ մնալով սոցիալական պատասխանատվության ու կայուն ֆինանսավորման մեր սկզբունքներին:

ԲԱՆԿԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Բանկային ծառայությունների ու կայուն ֆինանսավորման ճկուն լուծումների միջոցով դառնալ Հայաստանի Հանրապետությունում առաջատար կորպորատիվ և ներդրումային բանկ՝ մեր հաճախորդների համար ֆինանսական շուկայում լինելով լավագույն գործընկեր:

ԲԱՆԿԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ



Պրոֆեսիոնալիզմ - Լավագույն արդյունքների հասնելու նպատակով մեր փորձառու և առաջադեմ մասնագետները մշտապես բարձրացնում են իրենց մասնագիտական պատրաստվածությունն ու փոխանակվում են իրենց գիտելիքներով և փորձով:



Գործընկերություն - Փոխշահավետ արդյունքների հասնելու նպատակով մենք արժևորում ենք հաճախորդների և գործընկերների հետ երկարատև ու շարունակական համագործակցությունը:



Հուսալիություն - Լինելով հուսալի գործընկեր՝ մենք ձգտում ենք համագործակցել վստահելի կազմակերպությունների հետ և կառուցել կայուն, երկարաժամկետ հարաբերություններ:



Ապահովություն - Մենք հաճախորդների համար ստեղծել և շարունակում ենք պահպանել «Վստահելի Բանկ»-ի իմիջը՝ պահպանելով Բանկի կայունությունը և շարունակական բնականոն աճը:



Ազնվություն - Մենք հոգում ենք մեր բարի համբավի մասին, այդ իսկ պատճառով բարձր ենք գնահատում փոխադարձ վստահությունը և գործարար էթիկան:

ՄԵՐ ՁԵՌՔԵՐՈՒՄԵՐԸ



- **Կանաչ Կլիմայի Հիմնադրամ (GCF)**

2025 թվականի փետրվարի 18-ին Հարավային Կորեայում տեղի ունեցած Կանաչ Կլիմայի Հիմնադրամի (GCF) Խորհրդի 41-րդ տարեկան ժողովի ընթացքում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն ստացավ հավատարմագրում՝ դառնալով Հայաստանի Հանրապետությունում GCF-ի կողմից հավատարմագրված առաջին և միակ մասնավոր կառույցը:



- **Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ (ՎԶԵԲ)**

2025թ-ին ՎԶԵԲ-ի տարեկան ժողովի շրջանակում Առևտրի ֆինանսավորման ծրագրի (ԱՖԾ) ոլորտում նախորդ տարվա ցուցանիշների արդյունքներով, «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն յոթերորդ տարին անընդմեջ արժանացել է «2024թ. Ամենաակտիվ Թողարկող Բանկը Հայաստանում» և «Տարվա Կանաչ Գործարք» մրցանակներին:

Բանկը նախատեսում է 2026թ. ներգրավել 10 միլիոն ԱՄՆ դոլարի վարկային փաթեթ՝ ՓՄՁ-ների մրցունակության բարձրացմանը և «կանաչ անցման» ուղղված միջոցառումների ֆինանսավորմանն աջակցելու նպատակով, ինչպես նաև ևս 10 միլիոն ԱՄՆ դոլարի վարկային փաթեթ՝ «Երիտասարդները բիզնեսում» ծրագրի շրջանակում:

Հատկանշական է, որ կլիմայական անցման պլանավորման ուղղությամբ ներքին կարողությունների ձևավորման Բանկի փորձը ՎՋԵԲ-ի 34-րդ բիզնես համաժողովի շրջանակում ներկայացվել է որպես Հայաստանից լավագույն օրինակ՝ տեղ գտնելով ՎՋԵԲ-ի Climate transition of the financial sector 2025 զեկույցում՝ ընդգծելով Բանկի առաջատար դերը կայուն ֆինանսավորման և կլիմայական կարողությունների զարգացման գործում:



- **Ասիական Զարգացման Բանկ (ԱԶԲ)**

Բանկը ԱԶԲ-ի հետ համագործակցում է Առևտրի ֆինանսավորման ծրագրի (ԱՖԾ) շրջանակում 9 մլն ԱՄՆ դոլար սահմանաչափով: Բանկն Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) կողմից, Առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակում երեք անգամ արժանացել է «**Առաջատար գործընկեր բանկ Հայաստանում**» (**“Leading partner bank in Armenia”**) մրցանակին:



- **Եվրոպական Ներդրումային Ֆոնդ (EIF)**

ԱրմՍվիսԲանկն առաջին անգամ ՀՀ-ում կնքել է **20 մլն եվրո** ծավալով երաշխիքային գործիքի պայմանագիր Եվրոպական Ներդրումային Ֆոնդի (EIF) հետ:

Նոր ֆինանսական միջոցները նպատակ ունեն խթանելու Հայաստանի տնտեսության զարգացմանը՝ աջակցելով փոքր ու միջին ձեռնարկություններին (ՓՄՁ) և կանանց ձեռներեցությանը:



- **Եվրոպական Ներդրումային Բանկ (EIB)**

Ծարունակվել է համագործակցությունը Եվրոպական Ներդրումային Բանկի (ԵՆԲ) հետ՝ 2024թ. կնքված 16 մլն եվրո ընդհանուր ծավալով վարկային պայմանագրի շրջանակում, որի նպատակն է Հայաստանում մանր, փոքր և միջին ձեռնարկությունների (ՄՓՄՁ) ֆինանսական հասանելիության ընդլայնումը: Միաժամանակ նախատեսվում է 2026թ. ընդլայնել համագործակցությունը՝ կնքելով ևս 15 մլն եվրո ընդհանուր ծավալով վարկային պայմանագիր:



- **Միավորված ազգերի կազմակերպության Շրջակա միջավայրի ծրագրի ֆինանսական նախաձեռնություն (UNEP FI)**

Միանալով UNEP FI-ին, Բանկը զուգահեռ քայլելու է այն հեղինակավոր հաստատությունների հետ, որոնք հավատարիմ են իրենց գործունեության հիմքում կայունություն ապահովելու սկզբունքներին:



- **Partnership for Carbon Accounting Financials (PCAF)**

Որպես առաջատար ֆինանսական կազմակերպություն Բանկը համագործակցում է **PCAF (Partnership For Carbon Accounting Financials)** կազմակերպության հետ, որի մեթոդաբանությունն օգնում է ֆինանսական հաստատություններին հաշվարկել իրենց ածխածնի արտանետումները, այդպիսով նպաստելով ավելի պատասխանատու ֆինանսական գործունեության զարգացմանը: Այս համատեքստում Բանկը համագործակցում է միջազգային **Greenly software** ընկերության հետ, որի շրջանակում հաշվարկվում են ածխածնի արտանետումները՝ ըստ PCAF մեթոդաբանության:

Բանկը երկու տարի անընդմեջ հրապարակում է իր GHG արտանետումների հաշվետվությունը և համապատասխանեցնում է իր գործունեությունը միջազգային կլիմայական նպատակներին:



- **ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՊԼԱՆ**

ԱրմՍՎԻՍԲանկը պաշտոնապես հրապարակել է իր առաջին Կլիմայական անցումային պլանը՝ ներկայացնելով Բանկի կլիմայական փոփոխություններին արձագանքելու առաջին համալիր ռազմավարական փաստաթուղթը, որը համահունչ է Փարիզի համաձայնագրի նպատակներին և ՀՀ ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ (մինչև 2050թ.) ռազմավարությանը:



- **Visa B2B Connect**

Բանկն առաջինն է Հայաստանում, որը բիզնես հաճախորդներին առաջարկել է Visa B2B Connect առաջադեմ ծառայությունը՝ նախատեսված ընկերությունների միջև միջազգային փոխանցումների համար: Այն հնարավորություն է տալիս կատարել արագ, անվտանգ և արդյունավետ փոխանցումներ Visa B2BConnect-ի գլոբալ ցանցի միջոցով՝ շուրջ 118 երկրներում գործող անդամ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների միջև:

- **Visa**

Visa-ի տարեվերջյան մրցանակաբաշխության շրջանակում ԱրմՍՎԻՍԲանկն արժանացել է **Visa Corporate Payments Innovation** միջազգային մրցանակին կորպորատիվ վճարումների ոլոր-



տում նորարարական լուծումների ներդրման և զարգացման համար:



- **IPRA GOLDEN WORLD AWARDS 2025**

Բանկի Climate Intelligence: ArmSwissBank Leads Green արձավը ճանաչվել է հաղթող հեղինակավոր IPRA Golden World Awards 2025 մրցանակաբաշխության “Climate Change and Literacy” անվանակարգում:



- **ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԲԱՆԿԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ (BACEE)**

Բանկը անդամակցել է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի Բանկերի Ասոցիացիային (BACEE), որը համախմբում է Եվրամիության, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Կովկասյան երկրների առաջատար բանկերը:



- **Ժամանակակից վճարային լուծումներ**

Բանկը միացել է ArcaPay վճարային համակարգին՝ ապահովելով պարզ և արագ դրամային փոխանցումներ համակարգին միացած այլ բանկերի հաճախորդներին՝ ընդամենը ստացողի բջջային հեռախոսահամարի միջոցով:



- **Mastercard® Business Preferred և World պրեմիում քարտեր**

Mastercard® Business Preferred պրեմիում քարտը նախատեսված է բիզնեսի ոլորտում գործունեություն ծավալող անձանց համար՝ ապահովելով առավելագույն հարմարավետություն, անվտանգության բարձր մակարդակ և պրեմիում արտոնություններ ամբողջ աշխարհում:

Բանկի հաճախորդներին այժմ հասանելի է միջազգային Mastercard վճարահաշվարկային համակարգի պրեմիում դասի 2 նոր քարտ՝ Business Preferred և World, որոնք տրամադրում են բացառիկ հնարավորություններ՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում:

ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2025

2024

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
2025/2024

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (ՄԼՆ ԴՅ ԴՐԱՄ)

Ընդհանուր ակտիվներ

473,210

468,024

+5,186

+1.11%

↑

Վարկային պորտֆել
(ներառյալ՝ ֆակտորինգ)

220,401

204,926

+15,475

+7.55%

↑

Արժեթղթերի պորտֆել

190,626

206,200

-15,574

-7.55%

↓

Ընդհանուր պարտավորություններ

382,851

392,904

-10,053

-2.56%

↓

Ավանդային պորտֆել

181,820

173,610

+8,210

+4.73%

↑

Թողարկված պարտատոմսերի պորտֆել

65,291

69,774

-4,483

-6.43%

↓

Սեփական կապիտալ

90,359

75,120

+15,239

+20.28%

↑

Շահույթ

9,120

9,815

-695

-7.08%

↓

Ընամենը

473,210

468,024

+5,186

+1.11%

↑

ԱՅԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Աշխատակիցներ
(միջին տարեկան)

168

167

+1

+0.06%

↑

Հաճախորդներ

5,890

5,683

+207

+3.64%

↑

ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

ROA

1.93%

2.10%

ROE

10.09%

13.07%

Մեկ աշխատակցին բաժին ընկնող հասույթ

304,1

280,5

+23,6

+8.41%

↑

Մեկ աշխատակցին բաժին ընկնող շահույթ

65,3

72,2

-6,9

-9.56%

↓

ՇԱՀՈՒՅԹ



9,120
2025

9,815
2024

-695 | -7.08% ↓

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ



168
2025

167
2024

+1 | +0.06% ↑

ՀԱճԱԽՈՐԴՆԵՐ



5,890
2025

5,683
2024

+207 | +3,64% ↑

ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ



ROA 1.93% 2.10%
2025 2024

ROE 10.09% 13.07%
2025 2024

Մեկ աշխատակցին
բաժին հասույթ 304,1 280,5
2025 2024

Մեկ աշխատակցին
բաժին շահույթ 65,3 72,2
2025 2024



ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ

Բանկի 2025 թվականի վարկային գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշներն ու իրադարձությունները.

ՎԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

Տնտեսության վարկավորումը Բանկի ռազմավարական և էական բիզնես ուղղություններից է: 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկավորման ընդհանուր ներդրումների ծավալը կազմել է Բանկի ընդհանուր ակտիվների շուրջ 46.6%-ը:

Բանկը, իր որդեգրած վարկային քաղաքականության շրջանակում, շարունակում է առաջնահերթություն տալ կայուն բիզնեսներին, որոնք ունեն զարգացման տեսանելի հեռանկարներ, արդյունավետ կառավարման համակարգ: Բանկը պատրաստակամ է ընդլայնել համագործակցությունն այն հաճախորդների հետ, ովքեր արդեն օգտվում են կամ հետաքրքրված են Բանկի առաջարկած այլ ծառայություններով:

ԱրմՍՎԻՍԲԱՆԿՆ իր հաճախորդներին առաջարկում է վարկային գործիքների լայն փաթեթ, այդ թվում՝



- վարկեր, վարկային գծեր, օվերդրաֆտներ, այդ թվում՝ քարտային օվերդրաֆտներ,



- բանկային երաշխիքներ, ակրեդիտիվներ,



- գնման պատվերի ֆինանսավորում, նախաարտահանման և հետարտահանման ֆինանսավորում, ներմուծման ֆինանսավորում, ֆակտորինգ,



- Նախագծային ֆինանսավորում, այդ թվում՝ վերականգնվող էներգիայի, էներգաարդյունավետ նախագծերի ֆինանսավորում,



- լիզինգային ֆինանսավորում և հաճախորդների կարիքներից բխող այլ ծառայություններ:

Շատ հաճախ, հաշվի առնելով հաճախորդի առանձնահատուկ պահանջները, Բանկը կիրառում է ճկուն մոտեցում՝ համադրելով մի քանի վարկային գործիք կամ փոխարինելով մեկը մյուսով՝ ելնելով ծրագրի նպատակից, ժամկետից, մարման աղբյուրից և այլ գործոններից: Այս մոտեցումը հաճախորդին հնարավորություն է տալիս օգտվելու առավել մատչելի և համապատասխանեցված ֆինանսական լուծումներից:

Բանկի կողմից տնտեսության վարկավորման հիմնական ոլորտներն են՝



- **Արտադրություն** (սննդի արդյունաբերություն, թեթև արդյունաբերություն, ձկնաբուծություն և այլն), ներառյալ արտահանող ընկերությունները



- **Էներգետիկա**, հատկապես՝ վերականգնվող էներգիայի նախագծեր
- **Առևտուր, գյուղատն-**



- **տեսություն** (արտադրություն, վերամշակում, պտղատու այգիների հիմնում)



- **Բնակելի կառուցապատում, տուրիզմ**

Բանկը կապիտալ ներդրումների, էներգաարդյունավետության բարձրացման և/կամ շրջանառու միջոցների համալրման նպատակով առաջարկում է միջևժամկետ կամ երկարաժամկետ ֆինանսավորման գործիքներ, իսկ առևտրի ֆինանսավորման նպատակով՝ հիմնականում կարճաժամկետ ֆինանսավորման գործիքներ:

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱրմՍվիսԲանկը զբաղեցրել է ՀՀ բանկային համակարգի **8-րդ հորիզոնականը**՝ իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի ծավալով և կազմել է համակարգի համախառն ցուցանիշի շուրջ 4.1%-ը:¹

Անհատական վարկային ծառայությունների շրջանակում Բանկը տարեցտարի ակտիվացնում է իր գործունեությունը հիփոթեքային վարկավորման շուկայում՝ հաճախորդներին առաջարկելով մրցունակ պայմաններով լուծումներ՝ սեփական բնակարան ձեռք բերելու կամ բարելավելու նպատակով:

Բանկի վարկային պորտֆելը ձևավորվում է ինչպես սեփական միջոցներով, այնպես էլ տեղական և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվող ծրագրային ֆի-


¹ Համաձայն Արմինֆո գործակալության 25.02.2026թ-ի թիվ 125 տարեկան վերլուծական հաշվետվության:

Նախաավորմամբ: 2025 թվականի վերջի դրությամբ ծրագրային միջոցների մասնաբաժինը կազմել է վարկային պորտֆելի **շուրջ 17.4%-ը**:


2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱրմՍվիսԲանկի ընդհանուր վարկային պորտֆելը կազմել է շուրջ 220,4

մլրդ ՀՀ դրամ, որը 7.6%-ով գերազանցել է Նախորդ տարվա համադրելի ցուցանիշը: Վարկային ներդրումներից ստացված տոկոսային եկամուտները կազմել են շուրջ 22,7 մլրդ ՀՀ դրամ, ապահովելով շուրջ 12.9% աճ Նախորդ տարվա համեմատությամբ:

Վարկային պորտֆել (մլրդ ՀՀ դրամ)



Վարկային ներդրումներից ստացված տոկոսային եկամուտների դինամիկան (մլրդ ՀՀ դրամ)



Բանկում վարկավորումը զարգացել է հետևյալ հիմնական ուղղություններով*.

- Կորպորատիվ, այդ թվում ՓՄՁ վարկավորում
- Նախագծային ֆինանսավորում

* Սույն բաժնում օգտագործված ցուցանիշները ներկայացված են ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված սկզբունքներին համապատասխան:

- Անհատական վարկավորում
- Արտահանման ֆինանսավորում և ֆակտորինգ
- Լիզինգ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ՓՄՁ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ

Այստեղ կենտրոնացված է Բանկի վարկային պորտֆելի գերակշիռ մասը, որը 2025թ-ի վերջի դրությամբ կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի շուրջ 45.0%-ը²:

Կորպորատիվ վարկերի պորտֆելում ներառված են խոշոր և փոքր ու միջին ձեռնարկություններին (ՓՄՁ) տրամադրված վարկերը և ֆինանսական վարձակալությունները (լիզինգ)² շրջանառու միջոցների համալրման, կապիտալ ներդրումների, առևտրի ֆինանսավորման, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտում՝ պետական ծրագրերի շրջանակներում իրականացվող նպատակների համար: Պորտֆելը ներառում է նաև վարկային գծեր, օվերդրաֆտներ և այլ համանման ֆինանսական գործիքներ՝ բացառությամբ նախագծային ֆինանսավորման շրջանակում տրամադրված վարկերի, որոնք ներկայացված են առանձին բաժնում:

Բանկի թիրախային հաճախորդներն են արտադրությամբ զբաղվող կազմա-

կերպությունները, այդ թվում՝ ներմուծումը փոխարինող և արտահանման ներուժ ունեցող ընկերությունները: Նրանց համար Բանկը տրամադրում է և շարունակաբար զարգացնում է միջազգային չափանիշներին համապատասխանող ժամանակակից և բազմաբնույթ ֆինանսական ծառայություններ:

Միևնույն ժամանակ էականորեն աճել են լիզինգային գործիքների ծավալները, որը պայմանավորված է կառավարության կողմից համապատասխան ոլորտում սուբսիդավորման ծրագրերի առկայությամբ: 31.12.2025թ-ի դրությամբ լիզինգի պորտֆելը կազմել է շուրջ 18,0 մլրդ ՀՀ դրամ: Կանխատեսվում է նաև, որ 2026թ-ի ընթացքում կշարունակվի բարձր մնալ պահանջարկը լիզինգային գործիքների և բանկային երաշխիքների նկատմամբ, քանի որ այս ճյուղն ունի զարգացման դեռ չօգտագործված պոտենցիալ և զարգացման միտում: Նախատեսվում է 2026թ-ին լիզինգի ծավալները հասցնել 20 մլրդ ՀՀ դրամի:

2 Այս ցուցանիշում ներկայացված չեն իրավաբանական անձանց դեբիտորական պարտքի ֆինանսավորման և նախաարտահանման ու հետարտահանման վարկերը: Դրանք ընդգրկված են «Արտահանման ֆինանսավորում և ֆակտորինգ» բաժնում:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Բանկի վարկային պորտֆելի տվյալ հատվածը ներառում է ֆինանսական միջոցների տրամադրում վերականգնվող էներգիայի, շինարարության, գյուղատնտեսության և մի շարք այլ ոլորտներում իրականացվող նորաստեղծ բիզնես նախաձեռնություններին: 2025թ-ի վերջի դրությամբ նախագծերի ֆինանսավորման պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի ավելի քան 26.7%-ը: 2024թ-ի տարեվերջինի համեմատ պորտֆելն աճել է շուրջ 6.5%-ով: Պորտֆելի 21.9%-ը կազմում են ծրագրային վարկերը:

2025թ-ի վերջի դրությամբ Բանկը հաջողությամբ իրականացրել է շուրջ 185 միջին և խոշոր չափի արևային կայանների կառուցման ծրագրերի ֆինանսավորում, որը ծավալային առումով հանդիսանում է ՀՀ բանկային համակարգում լավագույն ցուցանիշներից մեկ: Այս արդյունքներն ապահով-

վել են ինչպես միջազգային ֆոնդերի և ծրագրերի շրջանակում ֆինանսավորման պայմանների, այնպես էլ Բանկի սեփական ռեսուրսների արդյունավետ կիրառման միջոցով: Նույն ժամանակահատվածում Բանկի սեփական և ծրագրային ռեսուրսների հաշվին ֆինանսավորման փուլում են գտնվում շուրջ 15 շինարարական նախագծեր: Բանկը նաև առաջինն է, որ Գերմանահայկական Հիմնադրամի «Էներգաարդյունավետություն ՓՄՁ-ների համար» ծրագրի շրջանակում իրականացրել է Էներգաարդյունավետ բնակելի շենքի շինարարության ֆինանսավորում: Այս նախաձեռնությունը շարունակվում է, և Բանկը հետևողական ընդլայնում է նմանատիպ նախագծերի ֆինանսավորման պորտֆելը՝ խթանելով էներգախնայող և կայուն շինարարության զարգացումը Հայաստանում:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ

Թիրախային չհամարելով մանրածախ բանկային ծառայությունների շուկան՝ Բանկն առանձնակի հետաքրքրություն է հատկացնում հիփոթեքային վարկավորման ոլորտին, որտեղ վերջին տարիներին արձանագրվել են կայուն աճի միտումներ: Հիփոթեքային վարկավորումը կարևոր դեր ունի Բանկի կողմից ֆինանսավորվող շինարարական նախագծերի շրջանակում՝ ապահովելով

վարկային ռիսկերի արդյունավետ կառավարում և ծրագրերի շարունակական ընթացք:

2025թ-ի վերջի դրությամբ անհատական վարկերի պորտֆելը (ներառյալ սպառողական վարկերը) կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի ավելի քան 18.5%-ը՝ նախորդ տարվա համեմատ արձանագրելով շուրջ 6.1% աճ:

Բանկը ծառայությունների ամբողջականության ապահովման նպատակով անհատական վարկեր (հիփոթեքային, սպառողական և քարտային) է առա-

ջարկում Բանկի կորպորատիվ հաճախորդների սեփականատերերին, ղեկավար անձնակազմին և աշխատակիցներին:

ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՖԱԿՏՈՐԻՆԳ (ԱՐՏԱՔԻՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ)

Առևտրի ֆինանսավորումը և ֆակտորինգը Բանկի վարկային գործունեության հիմնական և ռազմավարական ուղղություններից են, որոնց շրջանակում Բանկն արդեն երկար տարիներ պահպանում է իր առաջատար դիրքը ՀՀ բանկային համակարգում: Այդ մասին են վկայում նաև գործընկեր կազմակերպությունների՝ ՎՋԵԲ-ի, ԱՋԲ-ի և ՀԱԱԳ-ի կողմից առևտրի ֆինանսավորման ոլորտում Բանկին շնորհված մրցանակները:

Առևտրի ֆինանսավորման ոլորտում Բանկի համար առանցքային նշանակություն ունի արտահանման ֆինանսավորումը:

Արտահանման ֆինանսավորման և ֆակտորինգի ուղղությամբ Բանկն առաջարկում է ներքին ֆակտորինգ և դեբիտորական պարտքի ֆինանսավորում, որոնք օգնում են հաճախորդներին արդյունավետ կառավարել շրջանառու միջոցներն ու նվազեցնել վճարումների հետաձգման ռիսկերը:


Բանկը համագործակցում է մի շարք միջազգային կառույցների հետ, այդ թվում՝ ՎՋԵԲ, ԱՋԲ, ԵԱՋԲ, ՏՀՄԲ, ՀԱԱԳ, Միջազգային ֆակտորինգային ասոցիացիայի՝

FCI անդամ բանկերի հետ՝ հաճախորդներին տրամադրելով առևտրի ֆինանսավորման միջազգային գործիքների փաթեթ, ներառյալ ակրեդիտիվ, ինկասո, միջազգային երաշխիք, հետարտահանման և նախաարտահանման ֆինանսավորում:

2025թ-ի վերջի դրությամբ արտահանման ֆինանսավորման և ֆակտորինգի պորտֆելը կազմել է 15,9 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով շուրջ 31.2%-ով: Ֆակտորինգի ընդհանուր պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի շուրջ 7.0%-ը: Հաշվի առնելով, ֆակտորինգային գործիքների կարճաժամկետ բնույթը, հետաքրքրական է անդրադառնալ նաև 2025թ-ի ընթացքում տրամադրված ֆինանսավորումների ծավալին, որը կազմել է շուրջ 38,7 մլրդ ՀՀ դրամ:

Ստորև բերված է արտահանման ֆինանսավորման և ֆակտորինգի պորտֆելի ծավալների դինամիկան:

Արտահանման ֆինանսավորման և ֆակտորինգի պորտֆել (մլրդ ՀՀ դրամ)



2025թ-ի վերջի դրությամբ նախաարտահանման և հետարտահանման վարկերի պորտֆելը 2024թ-ի տարեվերջի համեմատ աճել է շուրջ 31.4%-ով: Այս ուղղությամբ Բանկն ակտիվորեն համագործակցում է ՀԱԱԳ-ի հետ և շարունակում է մնալ նրա ամենաակտիվ գործընկերը ՀՀ բանկային համակարգում:

Բանկի ֆակտորինգային գործարքներից ներկայումս օգտվում են հիմնականում թեթև արդյունաբերության, ձկնաբուծության, խմիչքների արդյունաբերության, պտուղ-բանջարեղենի

վերամշակման և պահածոյացման, բեռնափոխադրումների, մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտի ընկերությունները:

Միևնույն ժամանակ, Բանկը շարունակում է ակտիվ աշխատանքներ նոր ֆինանսական գործընկերների ներգրավման ուղղությամբ՝ նպատակ ունենալով ընդլայնել առևտրի ֆինանսավորման հնարավորությունները, բարձրացնել արտահանման ու ներմուծման գործընթացների ապահովման մակարդակը:


ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Վարկային ռիսկի արդյունավետ կառավարման ջրջանակում ԱրմՍՎԻՍԲանկը հատուկ ուշադրություն է դարձնում վարկային պորտֆելի բաշխվածությանն ըստ արժույթների, աշխարհագ-

րական դիրքի, ճյուղերի և ոլորտների՝ նվազեցնելով կենտրոնացման ռիսկերն առանձին ճյուղերում:


Վարկային պորտֆելի արժույթային կառուցվածքը՝ 31.12.2025թ-ի դրությամբ.

Տեսակարար կշիռ (%)



Վերջին երեք տարվա ընթացքում վարկային պորտֆելում գրանցվել է ՀՀ դրամով վարկերի տեսակարար կշռի աճ, մասնավորապես՝ 2025թ-ի վերջին այն կազմել է 76.15%, մինչդեռ 2024թ-ի և 2023թ-ի համար այն կազմել է համապատասխանաբար 72.00% և 64.27%: Նույն ժամանակահատվածում վարկային պորտֆելում հակառակ միտում է գրանցվել ԱՄՆ դոլարով վարկերի համար, մասնավորապես՝ 2025թ-ին ԱՄՆ դոլարով վարկերը կազմել են 14.95%, իսկ 2024թ-ին և 2023թ-ին՝ համապատասխանաբար 20.39% և 26.35%:

Վարկային պորտֆելի բաշխվածությունն ըստ տնտեսության ճյուղերի.



- Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնաբուծություն
- Արտադրություն
- Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում
- Շինարարություն
- Առևտուր
- Հյուրանոցային գործունեություն և կացության կազմակերպում
- Հիփոթեքային վարկեր
- Սպառողական վարկեր
- Տնտեսության այլ ճյուղեր

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ներդրումային գործունեությունն ԱրմՍՎԻՍԲանկի ռազմավարական բիզնես ուղղություններից մեկ է, որը միաժամանակ ծառայում է ինչպես Բանկի ակ-

տիվների արդյունավետ կառավարման, այնպես էլ հաճախորդների ֆինանսական կարիքների համալիր սպասարկման նպատակներին:

ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊՈՐՏՖԵԼ

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱրմՍՎԻՍԲանկի արժեթղթերի պորտֆելը (ներառյալ ռեպո համաձայնագրերով գնված և վաճառված արժեթղթերը) կազմել է 190,6 մլրդ ՀՀ դրամ՝ հաշվեկշռային արժեքով: 2024 թվականի համադրելի ցուցանիշի համեմատ պորտֆելի ծավալը նվազել է 7.6%-ով, որը պայմանավորված է Բանկի ներդրումային ռազմավարությամբ և ներքին քաղաքականությամբ՝ ուղղված պորտֆելի ծավալի կայուն պահպանմանը:


Արժեթղթերի պորտֆելն ապահովել է **Բանկի ընդհանուր ակտիվների 40.0%-ը**, ինչի արդյունքում Բանկը շարունակել է

մնալ ՀՀ բանկային համակարգի առաջատարներից՝ **արժեթղթերի պորտֆելի ծավալով զբաղեցնելով 5-րդ տեղը**:³

Պորտֆելի ծավալը տարվա ընթացքում կրել է տատանողական բնույթ, որը պայմանավորված է Բանկի ակտիվ գործունեությամբ երկրորդային շուկայում արժեթղթերի առքուվաճառքի ոլորտում, ինչպես նաև դրամային շուկայում իրականացվող ռեպո և հակադարձ ռեպո գործարքներով: Այս մոտեցումը բխում է Բանկի ներդրումային ռազմավարությունից և շարունակաբար նպաստում է Բանկի ֆինանսական արդյունքների ամրապնդմանը:

3 Համաձայն Արմինֆո գործակալության 25.02.2026թ-ի թիվ N125 տարեկան վերլուծական հաշվետվության:

Արժեթղթերի պորտֆել (մլրդ ՀՀ դրամ)




2025թ-ի վերջին արժեթղթերի պորտֆելի կազմում շուրջ 94.9%-ը կազմել են պետական պարտատոմսերը, իսկ 5.1%-ը՝ ոչ պետական պարտատոմսերը և ՀՀ ընկերությունների բաժնետոմսերը: Պետական պարտատոմսերի կազմում ընդգրկված են նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից թողարկված եվրոպարտատոմսերը:

2025թ-ին արժեթղթերի պորտֆելի ընդ-

հանուր միջին տարեկան եկամտաբերությունը (ներառյալ արժեթղթերի վաճառքից ստացված եկամուտը) կազմել է 9.97%, իսկ պետական պարտատոմսերի պորտֆելի համար՝ 10.01%:

2025թ-ին արժեթղթերի պորտֆելից ստացված տոկոսային եկամուտները կազմել են շուրջ 19,0 մլրդ ՀՀ դրամ կամ Բանկի ընդհանուր տոկոսային եկամուտների 42.21%-ը:

Արժեթղթերի պորտֆելից ստացված տոկոսային եկամուտները (մլրդ ՀՀ դրամ)



Բանկը մշտապես իրականացնում է պարտատոմսերի ամենօրյա գնանշումներ, որոնք արտացոլվում են Բանկի

պաշտոնական ինտերնետային կայքէջում:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱրմՍվիսԲանկը շարունակաբար կատարելագործում և ընդլայնում է իր ներդրումային ծառայությունների փաթեթը՝ առաջարկելով հաճախորդներին համապարփակ և անհատականացված (tailor-made) լուծումներ: Ներկայումս Բանկը մատուցում է արժեթղթերի բրոքերային ծառայություններ, պահառուական սպասարկում, թողարկողների ռեեստրավարման, արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպում, երկրորդային շուկայում իրացվելիության ապահովում, ներդրումային խորհրդատվություն և այլ ծառայություններ:

Բանկի միջնորդությամբ դեպոզիտարիայի կողմից մատուցվող ռեեստրավարման և պահառության ծառայությունների շրջանակներում 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը վարում է թվով 158 թողարկողի արժեթղթերի ռեեստր, այդ թվում՝ 26 պարտատոմսերի ռեեստր և 352 հաշվետիրոջ պահառուական հաշիվ: Բանկում բացված դեպոզիտներում հաշվառվում են հաճախորդների 66,01 մլրդ ՀՀ դրամի արժեթղթեր: Հաճախորդների կողմից պահառության հանձնված արժեթղթերը հիմնականում հանդիսանում են ամերիկյան, եվրոպական, ռուսական

ու հայկական պետական և կորպորատիվ արժեթղթեր:

Շուկա ստեղծողի ծառայությունների մատուցման շրջանակներում 31.12.2025թ-ի դրությամբ Բանկը հանդիսանում է 14 թողարկողների թվով 35 պարտատոմսերի շուկա ստեղծող, որոնց գերակշիռ մասը հանդիսանում են ՀՀ առևտրային բանկերի ու ֆինանսական այլ կազմակերպությունների կողմից թողարկվող պարտատոմսեր:

Բանկն ակտիվ գործունեություն է ծավալում կարճաժամկետ դրամական շուկայում և իրացվելիության կառավարման նպատակով շուկայից ներգրավում կամ տեղական ու միջազգային գործընկերներին է տրամադրում կարճաժամկետ ֆինանսավորում՝ օգտագործելով ռեպո, սվոփ գործիքներ, միջբանկային վարկեր և այլն: Բացի այդ, Բանկն ակտիվ գործառնություններ է իրականացնում բանկերի և ոչ բանկ ֆինանսական հաստատությունների հետ (ներառյալ վարկային կազմակերպություններ ու ապահովագրական, ներդրումային ընկերություններ), հնարավորություն ընձեռելով վերջիններիս ներդրումներ իրականացնել միջազգային և տեղական ֆինանսական շուկաներում՝ տարբեր ֆինանսական գործիքներով:

ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՈՍԿՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025 թվականին ԱրմՍվիսԲանկը պահպանել է բարձր ակտիվություն արտարժութային շուկայում, համագործակցելով ինչպես տեղական, այնպես էլ միջազգային բանկերի հետ: Բանկը շարունակել է կատարել գործարքներ արտարժութային առևտրի համար նախատեսված էլեկտրոնային հարթակներում՝ իրական առաքմամբ, որը զգալիորեն նվազեցնում է միջբանկային գործարքներին բնորոշ ռիսկերը և բարձրացնում գործառնությունների արդյունավետությունը:

2025 թվականին Բանկը շարունակել է ակտիվ գործունեություն ծավալել ոսկու ծուլակտորներով և անկանխիկ ոսկով իրականացվող գործարքների ուղղությամբ՝

յամբ՝ ընդլայնելով թանկարժեք մետաղների շուկայում իր մասնակցությունը: 2025թ-ին Բանկի կողմից իրականացրել է միջազգային գործընկերներից ոսկու ծուլակտորների ձեռք բերման, հաճախորդներին ոսկու ծուլակտորների վաճառքի և անկանխիկ ոսկով գործառնություններ: 2025թ-ին հաճախորդների հետ ոսկով գործառնությունների ընդհանուր ծավալը կազմել է շուրջ 228,90 մլն ՀՀ դրամ: Բացի այդ, 2025թ-ի ընթացքում Բանկը միջազգային գործընկերներից ձեռք է բերել և ՀՀ ներմուծել 9 կգ տարբեր քաշի (5, 10, 20, 50 և 100գ) ոսկու ծուլակտորներ՝ արտադրված Շվեյցարական հանրահայտ «Valcambi» թանկարժեք մետաղների գործարանի կողմից:



Ֆինանսներ

ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

Բանկի կառավարման մարմինները հատուկ ուշադրություն են դարձնում մատչելի և երկարաժամկետ ֆինանսական ռեսուրսների ներգրավմանը՝ որպես Բանկի բիզնես գործունեության ընդլայնման և կայուն աճի կարևոր նախադրյալ:

Բանկն իր գործունեության շրջանակում օգտվում է միջոցների ներգրավման տարբեր գործիքներից՝ հիմնված դիվերսիֆիկացման սկզբունքների վրա (ըստ արժույթի, ժամկետների, գործիքների, հաճախորդների և այլն):

Միջոցների ներգրավման հիմնական ուղղություններն են.

- 
 • իրավաբանական և ֆիզիկական անձանցից ցպահանջ ու ժամկետային ավանդների ընդունում,
- 
 • միջազգային և տեղական ֆինանսական կազմակերպություններից ծրագրային ֆինանսավորման ներգրավում,
- 
 • Բանկի սեփական պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման միջոցով ժամկետային միջոցների

Ներգրավում, որը հնարավորություն է տալիս նվազեցնել ներգրավված միջոցների ինքնարժեքը, սահմանափակել դրանց վաղաժամկետ վերադարձման ռիսկը, ինչպես նաև ապահովել պարտատերերի բազայի դիվերսիֆիկացիա,

- 
 • ՀՀ միջբանկային շուկայից միջոցների ներգրավում՝ ռեպո գործառնությունների միջոցով:

ԱՎԱՆՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

Ավանդները հանդիսանում են ֆինանսական միջոցների ներգրավման ավանդական գործիք և Բանկն իրա-

վաբանական ու ֆիզիկական անձ հաճախորդներին առաջարկում է հետևյալ ժամկետային ավանդատեսակները.

Ստանդարտ ավանդ



Համալրվող ավանդ



Կուտակային ավանդ




Բանկում ֆիզիկական անձանց կողմից տեղադրված ավանդներն երաշխավորված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից՝ օրենքով սահմանված չափերի սահմաններում:

Ելնելով բիզնես մոդելի առանձնահատկությունից և զանգվածային բանկային ծառայություններ չտրամադրելու Բան-

կի որդեգրած քաղաքականությունից՝ Բանկը սահմանել է ավանդի նվազագույն գումար՝ ՀՀ դրամով ավանդների համար 10 մլն ՀՀ դրամ, իսկ ԱՄՆ դոլարով, եվրոյով և ռուբլով ավանդների համար՝ համապատասխանաբար 20 հազար ԱՄՆ դոլար, 20 հազար եվրո և 1 մլն ռուբլի:

Ժամկետային ավանդային պորտֆել

(մլրդ ՀՀ դրամ)



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

ԱրմՍվիսԲանկը տարեցտարի խորացնում է համագործակցությունը ինչպես տեղական, այնպես էլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ՝ նպատակ ունենալով ընդլայնել

ֆինանսավորման հնարավորությունները և հաճախորդներին առաջարկել մրցակցային պայմաններով նոր վարկային լուծումներ:

Ստորև ներկայացնում ենք մեր հիմնական գործընկերներին.

- Բանկն ունի երկարաժամկետ արդյունավետ համագործակցության պատմություն **ՎՋԵԲ-ի հետ: Սկսած 2010** թվականից, Բանկն առևտրի ֆինանսավորման ոլորտից բացի զգալի հաջողություններ է գրանցել նաև ՓՄՁ վարկավորման և GCF-GEFF Armenia էներգաարդյունավետության ծրագրերի շրջանակում:

Համագործակցության ընթացքում Բանկի համար սահմանված սկզբնական սահմանաչափն ավելացել է մոտ 10 անգամ՝ կազմելով 38,5 մլն ԱՄՆ դոլար, որը ներկայումս ՀՀ բանկային համակարգում ամենամեծ սահմանաչափերից մեկն է:

ՎՋԵԲ-ի և Բանկի միջև Առևտրի ֆինանսավորման ոլորտում ցուցաբերած արդյունավետ ու տարեցտարի զարգացող գործունեության մասին է վկայում նաև 2025թ-ի մայիսի 13-15-ը Լոնդոնում կայացած ՎՋԵԲ-ի տարեկան ժողովի շրջանակում Առևտրի ֆինանսավորման ծրագրի (TFP) ոլորտում նախորդ տարվա ցուցանիշների հիման վրա **«2024թ-ի Ամենաակտիվ թողարկող բանկը Հայաստանում» և «Տարվա Կանաչ Գործարք»** մրցանակների շնորհումը:

ՎՋԵԲ-ի կողմից «Ամենաակտիվ Թողարկող Բանկ» մրցանակին Բանկն արժանանում է արդեն յոթերորդ տարին անընդմեջ:

- 2025 թվականին ԱրմՍվիսԲանկը ստացել է Կանաչ Կլիմայի Հիմնադրամի (GCF) կողմից հավատարմագրում (ակրեդիտացիա)՝ դառնալով Հայաստանի Հանրապետությունում **GCF-ի կողմից հավատարմագրված առաջին և միակ մասնավոր կառույցը:**

Հավատարմագրման շնորհիվ Բանկը ստացել է ուղիղ հասանելիություն աշխարհի խոշորագույն կլիմայական ֆինանսավորման հիմնադրամին՝ հնարավորություն ստանալով պարբերաբար ներկայացնել համապատասխան ծրագրեր և յուրաքանչյուր դեպքում ներգրավել մինչև 50 մլն ԱՄՆ դոլարի չափով արտոնյալ միջոցներ՝ Հայաստանի կլիմայական օրակարգին համապատասխան ծրագրերի ֆինանսավորման համար:

- ԱրմՍվիսԲանկը շարունակում է արդյունավետ համագործակցությունը **Ասիական Չարգացման Բանկի (ԱՉԲ) հետ՝ Առևտրի ֆինանսավորման ծրագրի (ԱՖԾ) շրջանակում:** Բանկի համար հաստատված սահ-

մանաչափը կազմում է 9 մլն ԱՄՆ դոլար:

2024 թվականի սեպտեմբերի 3-ին, Սինգապուրում կայացած 10-րդ ամենամյա մրցանակաբաշխության շրջանակում, Բանկը երրորդ տարին անընդմեջ ԱՖԾ (Առևտրի ֆինանսավորման ծրագիր) ոլորտում ճանաչվել է **«Առաջատար Գործընկեր Բանկ Հայաստանում»** (**“Leading Partner Bank in Armenia”**):

- Բանկն ակտիվ մասնակցություն ունի KfW բանկի և EIB կողմից ԳՀՀ-ի միջոցով իրականացվող մի շարք ծրագրերին, որը հնարավորություն է տալիս Բանկին այդ ծրագրի շրջանակում հաճախորդներին առաջարկել մատչելի և մրցունակ դրամային վարկեր:
- Առաջին անգամ ՀՀ-ում ԱրՍՎԽԲանկը և Եվրոպական Ներդրումային Ֆոնդը (EIF) կնքել են 20 մլն եվրո ծավալով երաշխիքային գործիքի պայմանագիր:

Նոր ֆինանսական միջոցները նպատակ ունեն խթանելու Հայաստանի տնտեսության զարգացմանը՝ աջակցելով փոքր ու միջին ձեռնարկություններին (ՓՄՁ) և կանանց ձեռներեցությանը:

Այս համագործակցությունը EIF-ի առաջին ծրագրային համագործակցությունն է ՀՀ-ում և ունի կարևոր նշանակություն: Պայմանագրի շրջանակում տրամադրվող երաշխիքները հնարավորություն են տալիս ՓՄՁ-ներին ստանալ ավելի հասանելի և ճկուն ֆինանսավորում՝ մեղմ գրավային պահանջներով և ավելի երկար վարկավորման ժամկետներով:

- ԱրՍՎԽԲանկն անդամակցել է ՄԱԿ-ի Շրջակա Միջավայրի Ծրագրի Ֆինանսական Նախաձեռնությանը (UNEP FI), հաստատելով իր հանձնառությունը որպես ՄԱԿ-ի Պատասխանատու բանկային գործունեության սկզբունքների (PRB) ստորագրող կողմ: Այս կարևոր քայլը վերահաստատում է Բանկի նվիրվածությունը/հավատարմությունը կայուն զարգացման սկզբունքներին՝ իր ռազմավարությունը համահունչ դարձնելով Փարիզի համաձայնագրի և ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներին (SDGs):

Բանկն անդամակցել է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի Բանկերի Ասոցիացիային (BACEE), որը կարևոր քայլ է Բանկի միջազգային համագործակցության ընդլայնման և տարածաշրջանային ֆինանսական կառույցների հետ ավելի սերտ փոխգործակցության, փորձի փոխանակման ուղղությամբ:

- ԱրՍՎԽԲանկը դարձել է առաջին ֆինանսական հաստատությունը Հայաստանում, որը միացել է «Partnership for Carbon Accounting Financials» (PCAF) միջազգային նախաձեռնությանը՝ միավորելով աշխարհի տարբեր երկրներում գործող առաջատար ֆինանսական կազմակերպություններին՝ ածխածնային հաշվառման միասնական մոտեցումների մշակման և կիրառման նպատակով: PCAF անդամակցությունը Բանկին հնարավորություն է տալիս գնահատել և հաշվարկել ածխաթթու գազի (CO₂) արտանետումների ծավալները, որոնք առաջանում կամ նվազում են Բանկի կողմից ֆինանսավորվող վարկային և ներդրումային նախագծերի արդ-

յունքում: Եվ, ըստ անհրաժեշտության, մշակել ռիսկերի նվազեցման և բնապահպանական ազդեցության նվազեցման ռազմավարություններ:

- ԱրմՍվիսԲանկը Հայաստանում առաջին ֆինանսական կառույցն է, որը պաշտոնապես հրապարակել է իր առաջին Կլիմայական անցումային պլանը՝ ներկայացնելով Բանկի Կլիմայական փոփոխություններին արձագանքելու առաջին համալիր ռազմավարական փաստաթուղթը, որը համահունչ է Փարիզի համաձայնագրի նպատակներին և ՀՀ ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ (մինչև 2050թ.) ռազմավարությանը:
- Բանկը միացել է **Visa B2B Connect** ծառայությանը՝ դառնալով առաջին բանկը ՀՀ-ում, որը նախատեսված է ընկերությունների միջև B2B միջազգային փոխանցումների համար: Ծառայությունը հասանելի է շուրջ 118 երկրների անդամ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների հետ:
- Բանկը միացել է **ArcaPay համակարգին**՝ հաճախորդներին առաջարկելով արագ, հարմար և անվտանգ դրամական փոխանցումների հնա-

րավորություն: Ծառայությունը թույլ է տալիս ArmSwissMobile հավելվածով վայրկյանների ընթացքում գումար փոխանցել համակարգին միացած այլ բանկերի հաճախորդներին՝ մուտքագրելով ընդամենը ստացողի բջջային հեռախոսահամարը:

- Բանկի **Climate Intelligence: ArmSwiss-Bank Leads Green** արշավը հաղթող է ճանաչվել հեղինակավոր IPRA Golden World Awards 2025 մրցանակաբաշխության **“Climate Change and Literacy”** անվանակարգում:
- Նախաարտահանման և հետարտահանման վարկերի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում Բանկը շարունակելու է խորացնել «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի հավաստագրի ապահովությամբ արտահանման ֆինանսավորումը: Բանկը շարունակում է մնալ ՀԱԱԳ-ի հետ համագործակցող ամենաակտիվ կառույցը ՀՀ բանկային համակարգում և պարբերաբար քննարկում է նոր գործիքակազմի ներդրման հնարավորությունները՝ արտահանման ֆինանսավորման գործընթացը դարձնելու ավելի արդյունավետ գրավիչ, մեր հաճախորդների համար:

2025 թվականին Բանկը կշարունակի ակտիվ համագործակցությունը միջազգային և տեղական ֆինանսական գործընկերների հետ՝ միաժամանակ ներգրավելով նոր գործընկերներ: Այս համագործակցությունները կկենտրոնանան ՓՄՁ, էներգաարդյունավետության, ԱՖԾ և այլ ծրագրերի ոլորտներում՝ մատչելի պայմաններով լրացուցիչ ֆինանսական միջոցներ տրամադրելու նպատակով:

ՍԵՓԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՆԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ

31.12.2025թ-ի դրությամբ շրջանառության մեջ են գտնվում Բանկի կողմից տեղաբաշխված պարտատոմսերի 15 թողարկումներ: Մանրամասները ներկայացված են ստորև.

Բանկի կողմից թողարկված, տեղաբաշխված և մարված պարտատոմսերի նկարագիրը 31.12.2025թ-ի դրությամբ

					
	Թողարկման արժույթ	Տեղաբաշխված ծավալ	Ժամկետայնություն	Արժեկտրոնային եկամտաբերություն	Մարման ժամկետ
2015 թվական					
SWISB1	USD	2,000,000	3 տարի	7.50 %	16.04.2018
SWISB2	USD	3,000,000	4 տարի	8.00 %	16.04.2019
SWISB3	USD	5,000,000	5 տարի	8.50 %	27.04.2020
2017 թվական					
SWISB4	USD	10,000,000	7 տարի	6.75%	15.06.2024
SWISB5	EUR	10,000,000	6 տարի	5.00%	15.06.2023
SWISB6	AMD	2,000,000,000	4 տարի	12.75%	15.06.2021
2018 թվական					
SWISB7	AMD	3,000,000,000	5 տարի	11.50%	24.05.2023
SWISB8	USD	6,000,000	7 տարի	6.50%	23.05.2025
SWISB9	USD	10,000,000	6 տարի	6.00%	22.11.2024
2019 թվական					
SWISB2A	USD	5,000,000	6 տարի	6.50%	02.05.2025
SWISB2B	EUR	3,000,000	4 տարի	4.00%	02.05.2023
2020 թվական					
SWISBC	AMD	10,000,000,000	5 տարի	9.00%	01.06.2025
SWISBD	USD	10,000,000	6 տարի	6.00%	01.06.2026
SWISBE	EUR	10,000,000	5 տարի	3.50%	01.06.2025
SWISBF	AMD	10,000,000,000	6 տարի	8.50%	28.09.2026
2023 թվական					
SWISBH	AMD	10,000,000,000	4 տարի	11.75 %	01.06.2027
SWISBI	USD	10,000,000	4 տարի	6.00 %	01.06.2027
SWISBJ	EUR	9,400,000	4 տարի	4.50 %	01.06.2027
2024 թվական					
SWISBK	AMD	4,650,000,000	2 տարի	10.00%	21.10.2026
SWISBL	AMD	5,000,000,000	3 տարի	10.00%	12.08.2027
SWISBM	AMD	5,000,000,000	4 տարի	10.20%	10.06.2028
SWISBN	USD	2,800,000	3 տարի	6.00%	21.10.2027
SWISBO	USD	15,000,000	4 տարի	6.25%	10.06.2028
SWISBP	EUR	2,100,000	4 տարի	5.00%	10.06.2028
2025 թվական					
SWISBR	AMD	4,742,750,000	4 տարի	10.25%	16.06.2029
SWISBS	AMD	7,000,000,000	5 տարի	10.50%	16.06.2030

2025թ-ին Բանկն իրականացրել է դրամային պարտատոմսերի 2 տրանշի թողարկում, որի արդյունքում տեղաբաշխվել է 11,7 մլրդ. դրամ ծավալով պարտատոմս: Մեկ տրանշի պարտատոմսի տեղաբաշխումը վերաբացվել և ավարտվել է 2026 թվականի հունվարի 15-ին (մոտ 2,26 մլրդ. ՀՀ դրամ): 2025թ-ին նաև վերաբացվել և տեղաբաշխվել են 5,3 մլն ԱՄՆ դոլարի և 1,1 մլն Եվրոյի պարտատոմսեր:

Հաջողությամբ մարվել են Բանկի 4 թողարկումները:

31.12.2025թ-ի դրությամբ Ֆոնդային բորսայի առևտրային հարթակում Բանկն ունի ցուցակված թվով 13 պարտատոմս:

2025թ-ին մարվել են Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի 4 թողարկում:

Բանկի թողարկված բոլոր պարտատոմսերը տեղաբաշխման ավարտից հետո ցուցակվել և շրջանառվում են Հայաստանի ֆոնդային բորսայում: Միաժամանակ, պարտատոմսերի իրացվելիության ապահովման նպատակով Բանկն օգտվում է շուկա ստեղծողի (market maker) ծառայություններից, որն ապահովել է Հայաստանի ֆոնդային բորսայի առևտրային նստաշրջաններում պարտատոմսերի երկկողմանի գնանշումները: Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը շուկայում հանդիսանում են ամենաիրացվելի և ամենապահանջված արժեթղթերից:


Հատկանշական է նաև, որ շուկայում Բանկի կողմից թողարկվող պարտատոմսերն ունեն բավականին մեծ պահանջարկ, որի մասին են վկայում Ֆոնդային բորսայում պարտատոմսերի գնանշումները:



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ


2025 թվականին ԱրմՍվիսԲանկը ձևավորել է շուրջ 9,1 մլրդ ՀՀ դրամ շահույթ, որն էականորեն չի փոփոխվել համեմատած նախորդ տարվա ցուցանիշի հետ:

Շահույթ
(մլրդ ՀՀ դրամ)



2025թ.-ին Բանկի ROA ցուցանիշը կազմել է 2.50%, իսկ ROE ցուցանիշը՝ 14.63%: Համաձայն Արմինֆո գործակալության 25.02.2026թ-ի թիվ N125 տարեկան վերլուծական հաշվետվության ROA շուկայի միջինը կազմում է 3.63%, իսկ ROE շուկայի միջինը՝ 22.50%:

ԲԱՆԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՅՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ




ՀՀ բանկային համակարգում Բանկը մշտապես առաջնային դիրքեր է զբաղեցնում «Մեկ աշխատակցին բաժին ընկնող հասույթ» և «Մեկ աշխատակցին բաժին ընկնող շահույթ» որակական ցուցանիշների մեծությամբ: Այդ առումով 2025թ-ը նույնպես բացառություն չի եղել, և բանկային համակարգում նշված ցուցանիշի գծով Բանկը զբաղեցրել է համապատասխանաբար 1-ին և 2-րդ հորիզոնականները՝ համաձայն «Արմինֆո» գործակալության 26.02.2025թ-ի թիվ 121 տարեկան վերլուծական հաշվետվության:

«Մեկ աշխատակցին բաժին ընկնող հասույթ» և «Մեկ աշխատակցին բաժին ընկնող շահույթ» որակական ցուցանիշները 2025թ.-ին կազմել են համապատասխանաբար՝ 304,1 մլն և 65,3 մլն ՀՀ դրամ:

2025թ-ի վերջի դրությամբ Բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը կազմում է 90,4 մլրդ ՀՀ դրամ, որն աճել է 2024թ.-ի համեմատ 20.4%-ով: ԱրմՍվիս-Բանկի կապիտալի ավելացումը պայմանավորված է գլխավոր պահուստի և չբախշված շահույթի ավելացմամբ, ինչպես նաև գրանցված դրական վերագնահատմամբ:


Կապիտալ (մլրդ. ՀՀ դրամ)



2025թ-ի վերջի դրությամբ Բանկի ակտիվները կազմել են ավելի քան 473,2 մլրդ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 1.1%-ով: Ակտիվներում մշտապես գերակշռել են ներդրումներն արժեթղթե-

րում (հիմնականում ՀՀ պետական պարտատոմսերում) և տեղաբաշխված միջոցները վարկային գործիքներում, որոնք հանդիսանում են Բանկի եկամուտների ձևավորման հիմնական աղբյուրները:

Ակտիվներ (մլրդ. ՀՀ դրամ)




2025թ. ընթացքում Բանկի ընդհանուր պարտավորությունները նվազել են 2.6%-ով՝ կազմելով 382,9 մլրդ ՀՀ դրամ: Նվազումը հիմնականում պայմանա-

վորված է հետգնման պայմանագրերով ներգրավվող միջոցների կրճատմամբ, որն արտացոլում է ֆինանսավորման աղբյուրների օպտիմալացումը:

Պարտավորություններ

(մլրդ ՀՀ դրամ)



Ըստ 2025թ-ի հունվարից դեկտեմբեր ամիսների ընթացքում առաջին 1000 խոշոր հարկ վճարողների և նրանց կողմից վճարված հարկերի մեծությունների ցանկի՝ Բանկը վճարել է շուրջ 4,1 մլրդ ՀՀ դրամի հարկեր: Բանկը զբաղեցնում է ընդհանուր ցուցակի 78-րդ, իսկ ՀՀ-ում գործող առևտրային բանկերի շրջանակում 14-րդ հորիզոնականը:

Մարդիկ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

ՄԵՐ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

ԱրմՍվիսԲանկն իր գործունեության ընթացքում հավատարիմ է մնում այն սկզբունքին, որ կորպորատիվ մշակույթը պետք է արտահայտվի ոչ միայն խոսքում, այլև առօրյա գործելակերպում՝ կարևորելով արդյունավետությունը, պատասխանատվությունն ու աշխատակիցների արժևորումը: Բանկը համոզված է, որ կայուն և հաջողակ կազմակերպության հիմքում կանգնած են մարդկանց նկատմամբ հարգանքն ու նրանց ներուժի շարունակական զարգացումը:

Մարդկային ռեսուրսների կառավարման շրջանակում Բանկը մեծ ուշադրություն է դարձնում բարձր որակավորում ունեցող և նախաձեռնող մասնագետների ներգրավմանը, աշխատակիցների մասնագիտական ու անձնական աճին, շարունակական ուսուցման հնարավորությունների ստեղծմանը և երիտասարդ մասնագետների ինտեգրմանը կազմակերպության մշակույթին ու աշխատանքային միջավայրին: Միաժամանակ Բանկը հետևողականորեն աջակցում է առողջ, համագործակցային և փոխվստահության վրա հիմնված

թիմային միջավայրի պահպանմանը:

Աշխատակիցների հետ հարաբերությունները Բանկում կառուցվում են երկարաժամկետ գործընկերության, փոխադարձ վստահության և հարգանքի սկզբունքների վրա: Գիտակցելով մասնագիտական բարձր պատրաստվածության կարևորությունը՝ Բանկը մշտապես խրախուսում է վերապատրաստումները, նոր գիտելիքների ձեռքբերումը և կարիերայի զարգացման հնարավորությունները:

Բանկի աշխատակիցներն առանձնապես են իրենց մասնագիտական պատրաստվածությամբ, պատասխանատվությամբ, նախաձեռնողականությամբ և թիմային աշխատանքի արդյունավետ հմտություններով: Նրանցից շատերը մասնակցել են Հայաստանում և արտերկրում կազմակերպված տարբեր մասնագիտական ծրագրերի, սեմինարների, կոնֆերանսների և միջազգային գործընկերների կողմից իրականացվող առցանց դասընթացների՝ նպաստելով գիտելիքների ընդլայնմանն ու փորձի փոխանակմանը:

Մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով Բանկը շարունակաբար խրախուսել է աշխատակիցների մասնակցությունը միջազգային հեղինակավոր ծրագրերի, այդ թվում՝ ACCA, CFA, ACAMS և այլ մասնագիտական հավաստագրման դասընթացների: Այդ նախաձեռնությունների արդյունքում Բանկի աշխատակիցներից մի քանիսը ստացել են միջազգային ճանաչում ունեցող մասնագիտական որակավորումներ:

Կարևորելով ներառականությունն ու հասարակական պատասխանատվությունը՝ 2025 թվականին Բանկն աշխատանքի է ընդունել պատերազմի ընթացքում վիրավորված մեկ անձի՝ ապահովելով նրա մասնագիտական

վերապատրաստումն ու ինտեգրումը բանկային ոլորտում:

2025 թվականի ընթացքում Բանկը կազմակերպել է տարբեր ձևաչափերի թիմային միջոցառումներ, որոնք ուղղված էին կազմակերպության ներսում հաղորդակցության մշակույթի զարգացմանը, թիմային համախմբվածության ամրապնդմանը և փոխադարձ վստահության խորացմանը: Այս նախաձեռնությունները նպաստել են աշխատանքային և ոչ ֆորմալ միջավայրերի համադրմանը, միջանձնային կապերի ամրապնդմանը, ինչպես նաև աշխատակիցների ներգրավվածության և թիմային ոգու բարձրացմանը:



2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկում աշխատակիցների թիվը կազմել է 173: Ընդ որում.

- բոլոր աշխատակիցներն ունեն բարձրագույն կրթություն,
- 3 աշխատակից ունի գիտություն-

ների թեկնածուի և մեկը՝ գիտությունների դոցենտի աստիճան,

- 1 աշխատակցի շնորհվել է ACCA հերթական որակավորում, 5 աշխատակից ունի ACAMS որակավորում:

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ

Հաճախորդների սպասարկումն ԱրմՍվիսԲանկի կառավարման մարմինների և աշխատակազմի կողմից մշտապես հանդիսացել է առաջնահերթություն: Տվյալ մոտեցումը լիովին համահունչ է Բանկի որդեգրած ռազմավարական արժեքներին, որոնց նպատակն է ապահովել բարձրակարգ, ամբողջական սպասարկում՝ ցուցաբերելով անհատական մոտեցում յուրաքանչյուր հաճախորդին:

Ֆինանսավորման ոլորտում Բանկը որպես հիմնական թիրախ դիտարկում է արտադրական և արտահանմանն ուղղված գործունեությամբ զբաղվող բիզնես հաճախորդներին: Վերջիններիս միաժամանակ միանում են նաև ֆիզիկական անձանց որոշակի շրջանակ և ինստիտուցիոնալ կառույցներ, որոնք ակտիվ մասնակցություն ունեն ֆինանսական շուկայում՝ որպես ավանդատուներ, պարտատոմսերի գնորդներ, ինչպես նաև որպես փոխարկման և այլ ներդրումային գործիքների շահառուներ: Նման հաճախորդների ֆինանսավորումը Բանկն իրականացնում է ինչպես ավանդական վարկավորման,

այնպես էլ առևտրի ֆինանսավորման այլընտրանքային գործիքների կիրառմամբ՝ խթանելով արտադրման և արտահանման ծավալների աճը:

Վերջին տարիներին Բանկի ռազմավարական առաջնահերթություններից է դարձել նաև արտադրական վերազինման, տեխնոլոգիական արդիականացման, էներգաարդյունավետության բարձրացման և «կանաչ» նախաձեռնությունների ֆինանսավորումը:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱրմՍվիսԲանկի ակտիվ հաճախորդների ընդհանուր թիվը նախորդ տարվա համեմատ էական փոփոխություն չի կրել, սակայն հաճախորդների կառուցվածքում արձանագրվել է որակական բարելավում՝ պայմանավորված Բանկի հաճախորդների բազայում առկա պասիվ իրավաբանական անձանց ակտիվացմամբ: Արդյունքում, տարեվերջի դրությամբ իրավաբանական անձինք կազմել են ակտիվ հաճախորդների 30.2%-ը, իսկ ֆիզիկական անձինք՝ 69.8%-ը:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հիմնվելով միջազգային լավագույն փորձի, գործող օրենսդրության պահանջների և սեփական կուտակած փորձի վրա՝ Բանկը շարունակաբար կատարելագործում է ռիսկերի կառավարման համակարգը:

Բանկը կիրառում է «Պաշտպանության երեք գծեր» (Three lines of defence) մոդելը, որի շրջանակում «առաջին գիծը» հանդիսանում է եկամտաստեղծ օղակը: «Երկրորդ գիծը» ներկայացնում են ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման ստորաբաժանումները, որոնք պարբերաբար իրականացնում են ռիսկերի նկատմամբ վերահսկողություն և դրանց վերաբերյալ հաշվետվություններ են ներկայացնում Բանկի ղեկավարությանը: «Երրորդ գիծը» ներկայացնում է Ներքին աուդիտի ստորաբաժանումը, որն անկախ ու օբյեկտիվ գնահատումներ և հավաստումներ է ներկայացնում Բան-

կի Խորհրդին և տնօրինությանը ներքին հսկողության, ռիսկերի կառավարման և կորպորատիվ կառավարման գործընթացների վերաբերյալ:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը մշակում է ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը, Բանկի ռիսկի ախորժակը, ռիսկերի ռազմավարությունը և վերականգնման ծրագիրը, գնահատում է կապիտալի համարժեքությունը, իրականացնում է սթրես թեստեր, վերահսկում է ֆինանսական ռիսկեր պարունակող գործառնությունները և ներկայացնում է հաշվետվություններ Բանկի Խորհրդին ու Տնօրինությանը՝ Բանկի ռիսկերի մակարդակի, սահմանաչափերի պահպանման և ուշադրություն պահանջող հիմնախնդիրների վերաբերյալ:

Համապատասխանության ապահովման պատասխանատուն իրականացնում է Բանկի համապատասխանության

և համբավի ռիսկերի բացահայտում, կառավարում և մոնիթորինգ, իսկ Ներքին դիտարկումների մարմինը՝ ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ-ի դեմ պայքարի և պատժամիջոցների պահանջների համապատասխանության գործառույթ: Գործառույթի արդյունավետության բարձրացման նպատակով Բանկի կողմից ներդրվել են SWIFT Transactions Screening, World Check և AML MANAGEMENT ծրագրային ապահովումները: Բանկը նաև ձեռք է բերել ՓԼ/ԱՖ և պատժամիջոցների պահպանմանն ուղղված նոր համապարփակ համակարգ (SIRON ONE), որի ներդրման աշխատանքներն ընթացքի մեջ են:

Վարկային ռիսկի կառավարման ստորաբաժանումը վարկային վերլուծությունների շրջանակներում իրականացնում է ռիսկերի գնահատումներ՝ այդ թվում նաև բնապահպանական և սոցիալական ռիսկերին վերաբերվող, Վարկային կոմիտեի կողմից սահմանված պայմանների վերահսկողություն, տրամադրված վարկային միջոցների հետստուգումներ, ֆինանսական, գործառնական, արտապլանային մոնիթորինգներ և այլ գործառույթներ՝ համաձայն Բանկի ղեկավարության հանձնարարականների:

Ներքին աուդիտի ստորաբաժանումն իր գործունեությունն իրականացնում է համաձայն Բանկի Խորհրդի կողմից հաստատված Ներքին աուդիտի ստորաբաժանման ռազմավարության և տարեկան աշխատանքային ծրագրի:

Բանկի Խորհրդի անդամներից ձևավորված Աուդիտի և ռիսկերի կառավարման կոմիտեն պարբերաբար քննարկում է Ներքին աուդիտի, ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման ստորաբաժանումների, Ներքին դիտարկումների մարմնի հաշվետվություններն ու աշխատանքների բարելավմանը վերաբերող հարցերը:

Համակարգի արդյունավետությունն ապահովվում է ստորաբաժանումների միջև իրավասությունների և պարտականությունների հստակ տարանջատման ու փաստաթղթավորման առկայության, ինչպես նաև համադրումների կիրառման շնորհիվ:

Ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով Բանկում կիրառվում են մի շարք հիմնարար սկզբունքներ: Դրանք են.

- Ներդրումային որոշումների ընդունման կոլեգիալ եղանակը, ռիսկերի բացահայտման, վերլուծության և գնահատման համար ռիսկերի կառավարման մոդելների ու տարրերի կիրառումը, աշխատատեղերում իրավասությունների և պարտականությունների տարանջատումը, գործառնությունների իրականացումը առնվազն «երկու անձի» սկզբունքով, ռիսկային գործառնությունների համար սահմանաչափերի որոշումն ու հսկողությունը, ռիսկային ակտիվների դիվերսիֆիկացիան, հնարավոր կորուստների ծածկման համար պահուստների ձևա-

վորումը, ռիսկի փոխանցումը երրորդ անձանց՝ ապահովագրության միջոցով, երբ դրանց նվազեցման օգուտները գերազանցում են գնահատված ծախսերը կամ դրանց նվազեցումը գործնականորեն անհնար է և այլն:

- Սթրես-թեստավորման համակարգի կիրառում, որը տարբեր հավանական սցենարների միջոցով գնահատում է իրավիճակների ազդեցությունը Բանկի շահույթի ու հիմնական տնտեսական նորմատիվների վրա:
- Գործառնական ռիսկի նվազեցման նպատակով ապահովագրության

փաթեթի կիրառում, որն իր մեջ ներառում է բանկային ռիսկերի համապարփակ, էլեկտրոնային ու համակարգչային հանցագործության և մասնագիտական պատասխանատվության ուղղությունները: Բանկի կողմից ձեռք է բերվում նաև շենքի և գույքի ապահովագրություն:

Ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողությունը Բանկում իրականացնում են Բանկի Խորհուրդը, Գործադիր տնօրենը և կորպորատիվ կառավարման սկզբունքների հիման վրա ստեղծված կոլեգիալ մարմինները՝ Տնօրենությունը, Վարկային և Ակտիվների ու պասիվների կառավարման կոմիտեները:



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱրմՍվիսԲանկի և աշխատակազմի համար մասնագիտական առօրյայից դուրս առանցքային նշանակություն ունեն սոցիալական պատասխանատվության իրականացման և հանրային կարիքներին արձագանքելու նախաձեռնողականությունը:

2025 թվականին Բանկը շարունակել է հանդես գալ մի շարք սոցիալական և բարեգործական նախաձեռնություններով, որոնք ուղղված են եղել՝ մշակութային արժեքների պահպանմանը և աջակցությանը, կրթական ծրագրերի խթանմանը, բնապահպանական գաղափարների տարածմանը, սոցիալապես խոցելի խմբերի՝ երեխաների և կարիքավոր ընտանիքների աջակցմանը և այլն:

Մասնավորապես.

- Բանկը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանին նվիրաբերել է

Նորագույն աուդիոգիդ սարքեր՝ շարունակելով աջակցել հայկական թանգարանի տեխնիկական վերազինմանն ու ժամանակակից լուծումների ներդրմանը: Արդյունքում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանում պահվող սրբությունների և արվեստի բարձրարժեք նմուշների վերաբերյալ տեղեկատվությունը այցելուներին կներկայացվի նաև աուդիոգիդ համակարգի միջոցով: Բացի այդ, խմբային շրջայցերի ընթացքում մեծ սրահներում ռադիոգիդ սարքավորումները հնարավորություն կտան էքսկուրսիաներն առավել հարմարավետ և արդյունավետ կազմակերպել:

- ԱրմՍվիսԲանկի ֆինանսավորմամբ Արմավիրի մարզի Աղավ-Նատան և Մեծամորի միջնակարգ դպրոցներում բացվել են «Արմաթ» ճարտարագիտական

աշխատանոցներ՝ նպաստելով երիտասարդների տեխնոլոգիական կրթության զարգացմանը: Աշխատանոցները հնարավորություն են ընձեռում աշակերտներին ձեռք բերել ծրագրավորման, ռոբոտաշինության և եռաչափ մոդելավորման հմտություններ: Նախաձեռնությունից կարող են օգտվել նաև հարակից համայնքների դպրոցների աշակերտները՝ ընդլայնելով կրթական նոր հնարավորությունների հասանելիությունը:

- Ամանորյա տոներին ընդառաջ ԱրմավիսԲանկը «Դարձիր Ձմեռ Պապ» նախաձեռնության շրջանակում իրականացրել է սոցիալական աջակցության ծրագիր՝

Բանկի աշխատակիցների ներգրավմամբ կազմակերպելով տոնական նվերների պատրաստում և փոխանցում սահմանամերձ և հատուկ ուշադրության կարիք ունեցող ընտանիքների երեխաներին: Նախաձեռնության շրջանակում ամանորյա նվերներ և հոգատարություն են ստացել Վարդենիսի սահմանամերձ համայնքների դպրոցականները, զոհված զինծառայողների և տեղահանված ընտանիքների երեխաները, ինչպես նաև անապահով ընտանիքների երեխաներ: Բացի այդ, դպրոցներին տրամադրվել են համակարգիչներ՝ նպաստելով կրթական հնարավորությունների ընդլայնմանը:



ԱՆԿԱՆ ԱՌԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերին

ԿԱՐԾԻՔ

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքա-

կանության վերաբերյալ էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔ

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան:

Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աու-

դիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «**Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի**» (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), որոնք կիրառելի են հանրային հետաքրքրություն ներկայացնող

կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

ԱՌԴԻՏԻ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական

հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք այդ հարցերի վերաբերյալ առանձին կարծիք չենք տրամադրում:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ՊԱՐՏՔԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԳԾՈՎ ՊԱՅՈՒՍ

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նկարագրությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների Ծանոթագրություն 4.6-ում, իսկ պարտքային ռիսկի վերլուծությունը՝ Ծանոթագրություն 35.1-ում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ձևավորումը համարվում է աուդիտի առանցքային հարց՝ հաճախորդներին տրված վարկերի նշանակալի լինելու, ինչպես նաև արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով: Տարբեր դատողությունների և ենթադրությունների

կիրառումը կարող է հանգեցնել ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման և ձևավորման էականորեն տարբեր արդյունքների, որը կարող է էական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական արդյունքների վրա:

Դատողությունների առանցքային ոլորտները ներառում են ՀՀՄՍ 9-ի կիրառման ժամանակ արժեզրկման որոշման պահանջների մեկնաբանումը, որը արտացոլվում է Բանկի՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելում, վարկի որակի էական վատթարացման հետ կապված բացահայտումները, նաև

ակնկալվող պարտքային կորուստների մոդելում օգտագործված ենթադրությունները, ինչպիսիք են երրորդ կողմի ֆինանսական վիճակը, ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերն ու կանխատեսվող մակրոտնտեսական գործոնները և լրացուցիչ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝ արտացոլելու ընթացիկ կամ ապագա արտաքին գործոնները, որոնք պատշաճ կերպով հաշվի չեն առնվել ակնկալվող պարտքային կորուստների մոդելում:

Արժեզրկման մեթոդոլոգիայի հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

- Ուսումնասիրվել է Բանկի՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա արժեզրկման պահուստի ձևավորման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկատվության նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ վարկի ձևավորման պահին ստացված գործարքային տվյալները, վարկային որակի շարունակական ներքին գնահատումները, ակնկալվող պարտքային կորուստների մոդելի տվյալների և ինտերֆեյսի պահպանումը:
- Գնահատվել է ակնկալվող պարտ-

քային կորուստների մոդելի նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ մոդելի կառուցումը և հաստատումը, շարունակական վերահսկումը/հավաստիացումը, մոդելի կառավարումը և թվաբանական ճշգրտությունը:

- Ստուգվել է Բանկի՝ պարտքային ռիսկի էական աճի որոշման և ռիսկերի հակվածությունը տարբեր փուլերում դասակարգելու հիմնավորվածությունը:
- Ռիսկերի որոշակի ընտրանքի համար ստուգվել է Բանկի փուլավորման ճշտությունը:
- Գնահատվել և թեստավորվել են մոդելավորման էական ենթադրությունները՝ կենտրոնանալով Բանկի կողմից ընդունված մոդելավորման առանցքային ենթադրությունների վրա, և պահուստների զգայունությունը մոդելավորման ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ:
- Բանկի ղեկավարության կողմից ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում օգտագործված կանխատեսվող ենթադրությունների հետ կապված քննարկումներ են անցկացվել ղեկավարության հետ, որի ընթացքում ենթադրությունները հաստատվել են՝ օգտագործելով հանրամատչե-

լի տեղեկատվությունը:

- Ուսումնասիրվել են ռիսկերի ընտրանքային օրինակներ և իրականացվել ընթացակարգեր՝ վարկային որակի էական վատթարացման ռիսկերի ժամանակին բացահայտելու և անհատապես գնահատված ռիսկերի գծով ակնկալվող կորուստների հաշվարկը գնահատելու նպատակով:
- Ստուգվել է 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի հաշվարկում ընդգրկված վարկերի և փոխատվությունների, արտահաշվեկշռային հոդվածների, ներդրումային արժեթղթերի, տեղաբաշխումների և այլ ֆինանսական ակտիվների ամբողջականությունը: Ստուգվել

են կիրառված մոդելների տեսական հիմքերը, և թեստավորվել է դրանց մաթեմատիկական ամբողջականությունը:

- Արտաքին աղբյուրներից ստացվող տվյալների մասով վերանայվել է նման տվյալների ընտրության գործընթացը, Բանկի համար դրա տեղին լինելը և նման տվյալների նկատմամբ վերահսկողության ու կառավարման մեխանիզմը:
- Մեր SS ոլորտի մասնագետները ներգրավվել են հատուկ փորձառություն պահանջող ոլորտներում (օրինակ՝ տվյալների հուսալիություն):
- Գնահատվել է ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը:

ԱՅԼ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Ընկերության 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 2025թ.

ապրիլի 30-ի եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը բաղկացած է Բանկի՝ 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար տարեկան հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվությունից, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակա-

ցությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը մեզ հասանելի կլինի սույն աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք դրանց վերաբերյալ որևէ ձևի հավաս-

տիացման եզրակացություն չենք արտահայտելու:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդ-

յոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ղեկավարությունը պատասխանատու է ՀՀՄՍԽ կողմից հրապարակված ՀՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Բանկի՝ անընդհատ

գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Բանկը լուծարելու կամ Բանկի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

ԱՌԴԻՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ

հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է

ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատաս-

խան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են միևնույն մեր եզրակացության ամ-

սաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բանկին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի համապատասխան պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ

հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցած հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտորի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Աուդիտորական առաջադրանքի ղեկավարը, որի արդյունքում ներկայացվում է սույն աուդիտորական եզրակացությունը՝ Լիլիթ Բաղդասարյանն է:

Արմեն Յովհաննիսյան

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն

Լիլիթ Բաղդասարյան

Առաջադրանքի ղեկավար

30 ապրիլի, 2026թ.

ԾԱՅՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ	2025թ.	2024թ.
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	43,046,061	41,439,737
Այլ տոկոսային եկամուտ	1,987,095	1,297,077
Տոկոսային ծախսեր	(27,699,642)	(28,140,511)
Զուտ տոկոսային եկամուտներ	17,333,514	14,596,303
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	2,111,321	1,551,040
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	(483,312)	(335,655)
Միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ եկամուտ	1,628,009	1,215,385
Զուտ առևտրային եկամուտ	1,878,494	1,772,459
Պարտքային կորուստների գծով ծախս	(7,835,913)	(2,098,897)
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների ապահանաչման գծով զուտ օգուտ	86,010	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների ապահանաչման գծով օգուտ	1,001,530	183,141
Արտարժույթի փոխարկումից զուտ վնաս	(398,079)	(224,750)
Այլ գործառնական եկամուտ	977,668	591,937
Անձնակազմի գծով ծախսեր	(2,463,832)	(2,971,807)
Հիմնական միջոցների մաշվածություն և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	(257,979)	(268,523)
Այլ ծախսեր	(975,536)	(740,078)
Շահույթ մինչև հարկումը	10,973,886	12,055,170
Շահութահարկի գծով ծախս	(1,854,023)	(2,240,300)
Տարվա շահույթ	9,119,863	9,814,870

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ	2025թ.	2024թ.
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		
Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում		
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային գործիքների վերագնահատումից օգուտ	59,048	52,219
Զվերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ	(10,629)	(9,399)
Ընդամենը հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում	48,419	42,820
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս		
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած զուտ օգուտ	7,451,198	7,541,169
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում	(47,784)	28,057
Վերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ	(1,332,615)	(1,362,461)
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	6,070,799	6,206,765
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ շահութահարկից հետո	6,119,218	6,249,585
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	15,239,081	16,064,455

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	31,990,579	27,139,747
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	6,983	35,781
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16,152,027	13,962,886
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	220,401,268	204,925,841
Ներդրումային արժեթղթեր	127,177,598	116,048,596
Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	63,448,293	90,151,363
Հիմնական միջոցներ	1,767,883	1,925,452
Ոչ նյութական ակտիվներ	137,342	117,082
Բռնագանձված ակտիվներ	2,097,198	1,750,995
Հետաձգված հարկային ակտիվ	-	643,713
Այլ ակտիվներ	10,030,950	11,322,484
Ընդամենը՝ ակտիվներ	473,210,121	468,023,940
Պարտավորություններ և սեփական կապիտալ		
Պարտավորություններ		
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	62,786,808	84,664,361
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	138,925	80,370
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	181,820,486	173,610,357
Թողարկված պարտքային արժեթղթեր	65,290,747	69,773,790
Այլ փոխառու միջոցներ	37,979,773	29,629,001
Ստորադաս փոխառություններ	30,145,959	30,148,534
Շահութահարկի գծով ընթացիկ պարտավորություն	346,512	1,098,856
Հետաձգված հարկային պարտավորություն	305,897	-
Այլ պարտավորություններ	4,036,058	3,898,796
Ընդամենը՝ պարտավորություններ	382,851,165	392,904,065

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ԾԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Սեփական կապիտալ		
Բաժնետիրական կապիտալ	10,000,200	10,000,200
Էմիսիոն եկամուտ	6,205,548	6,205,548
Գլխավոր պահուստ	45,000,000	40,000,000
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության պահուստ	1,954,374	(4,164,844)
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	1,558,768	1,558,768
Զբաղիչված շահույթ	25,640,066	21,520,203
Ընդամենը՝ սեփական կապիտալ	90,358,956	75,119,875
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ	473,210,121	468,023,940



ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Փխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության պահուստ	Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	10,000,200	6,205,548	40,000,000	(4,164,844)	1,558,768	21,520,203	75,119,875
Տարվա շահույթ	-	-	-	-	-	9,119,863	9,119,863
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	-	8,581,563	-	-	8,581,563
Իրացումից շահույթին փոխանցված զուտ գումար	-	-	-	(1,071,317)	-	-	(1,071,317)
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություններ	-	-	-	(47,784)	-	-	(47,784)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	(1,343,244)	-	-	(1,343,244)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	6,119,218	-	9,119,863	15,239,081
Հատկացում պահուստին	-	-	5,000,000	-	-	(5,000,000)	-
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	-	-	5,000,000	-	-	(5,000,000)	-
Հաշվեկշիռը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10,000,200	6,205,548	45,000,000	1,954,374	1,558,768	25,640,066	90,358,956

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

Հազար ՀՀ դրամ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության պահուստ	Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	10,000,200	6,205,548	40,000,000	(10,414,429)	1,558,768	11,705,333	59,055,420
Տարվա շահույթ	-	-	-	-	-	9,814,870	9,814,870
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	-	7,795,400	-	-	7,795,400
Իրացումից շահույթին փոխանցված զուտ գումար	-	-	-	(202,012)	-	-	(202,012)
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություններ	-	-	-	28,057	-	-	28,057
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	(1,371,860)	-	-	(1,371,860)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	6,249,585	-	9,814,870	16,064,455
Հաշվեկշիռը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10,000,200	6,205,548	40,000,000	(4,164,844)	1,558,768	21,520,203	75,119,875

ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ	2025թ.	2024թ.
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Շահույթ մինչև հարկումը	10,973,886	12,055,170
ճշգրտումներ		
Ֆինանսական ակտիվների արժեզրկման ծախս	7,835,913	2,098,897
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	257,979	268,523
Ստացվելիք տոկոսներ	(485,032)	(218,030)
Վճարվելիք տոկոսներ	54,136	(2,770)
Հիմնական միջոցների օտարումից օգուտ	(688)	(1,299)
Արտարժույթի փոխարկումից վնաս	398,079	224,750
Թանկարժեք մետաղների վերագնահատումից զուտ օգուտ	(69,561)	(21,386)
Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունից զուտ վնաս	87,353	24,296
Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	19,052,065	14,428,151
(Ավելացում) նվազում գործառնական ակտիվներում		
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(2,600,230)	(1,528,013)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(23,504,470)	(37,174,261)
Բռնագանձված ակտիվներ	(1,029)	(878,810)
Այլ ակտիվներ	1,426,744	(5,055,018)
Ավելացում (նվազում) գործառնական պարտավորություններում		
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	(22,387,246)	(6,810,542)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	8,559,980	14,945,886
Այլ պարտավորություններ	(205,748)	2,041,905
Ձուտ դրամական հոսքեր գործառնական գործունեության համար օգտագործված մինչև շահութահարկը	(19,659,934)	(20,030,702)
Վճարված շահութահարկ	(3,000,001)	(1,286,614)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(22,659,935)	(21,317,316)

ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ԶԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

Հազար ՀՀ դրամ	2025թ.	2024թ.
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Հիմնական միջոցների առք	(24,401)	(102,184)
Հիմնական միջոցների վաճառք	688	1,261
Ներդրումային արժեթղթերի առք	(13,576,642)	(15,775,129)
Ներդրումային արժեթղթերի վաճառք	36,742,375	27,405,562
Ոչ նյութական ակտիվների առք	(62,895)	(41,504)
Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	23,079,125	11,488,006
Ֆինանսավորման գործունեությունից դրամական հոսքեր		
Այլ փոխառու միջոցներից մուտքեր	19,703,485	12,539,792
Այլ փոխառու միջոցների մարում	(12,010,185)	(11,365,500)
Պարտքային արժեթղթերի թողարկում	26,552,190	23,130,656
Պարտքային արժեթղթերի մարում	(30,871,988)	(7,578,808)
Ստորադաս փոխառության ստացում	-	3,702,238
Ստորադաս փոխառության մարում	-	(5,642,307)
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(108,291)	(105,600)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	3,265,211	14,680,471
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	3,684,401	4,851,161
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ	27,139,747	23,499,645
Արժեզրկման պահուստում փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	22,098	(25,133)
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	1,144,333	(1,185,926)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ (Ծանոթագրություն 13)	31,990,579	27,139,747
Լրացուցիչ տեղեկատվություն՝		
Ստացված տոկոսներ	44,548,124	42,518,784
Վճարված տոկոսներ	(27,645,506)	(28,143,281)

Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական տարբերակին կարող եք ծանոթանալ այցելելով Բանկի պաշտոնական կայք-էջ՝

https://www.armswissbank.am/upload/audit_report_2025.pdf

ՕԳՏԱԿԱՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ

USEFUL INFORMATION ABOUT BANK

Համագործակցություն Cooperation



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
UNION OF BANKS OF ARMENIA СОЮЗ БАНКОВ АРМЕНИИ
Հայաստանի Բանկերի Միություն (ՀԲՄ)
Union of Banks of Armenia (UBA)
www.uba.am



Արմենիան քարդ (ԱՐՔԱ)
Armenian Card (Arca)
www.arca.am



Հայաստանի Ֆոնդային Բորսա
Armenia Stock Exchange (AMX)
www.amx.am



Մաստերքարտ
Mastercard
www.mastercard.am



ԱՔՐԱ Վարկային Բյուրո (ԱՔՐԱ)
Armenia Credit Reporting Agency (ACRA)
www.acra.am



Visa
www.usa.visa.com



Համաշխարհային միջբանկային
ֆինանսական հեռահաղորդակցման
ընկերություն
Society for Worldwide Interbank Financial
Telecommunications (SWIFT)
www.swift.com



Facilitating Open Account – Receivables Finance

Առաջատար Ֆակտորինգային
Կազմակերպությունների Միջազգային
Ցանց
Factors Chain International (FCI)
www.fci.nl/en



Ամերիկայի Առևտրի Պալատը
Հայաստանում
American Chamber of Commerce in
Armenia (AMCHAM)
www.amcham.am



Եվրոպական Բիզնես Ասոցիացիա
European Business Association (EBA)
www.eba.am



«Գերմանահայկական հիմնադրամ»
ծրագրի կառավարման գրասենյակի պե-
տական հիմնարկ (ԳՀՀԾԿԳ)
Project Management Unit of German-Arme-
nian Fund State Institution (PMU GAF)
www.gaf.am



European Bank
for Reconstruction and Development

Վերակառուցման և Զարգացման
Եվրոպական Բանկ (ՎԶԵԲ)
European Bank for Reconstruction and
Development (EBRD)
www.ebrd.com



ASIAN DEVELOPMENT BANK

Ասիական Զարգացման Բանկ (ԱԶԲ)
Asian Development Bank (ADB)
www.adb.org



Евразийский
Банк Развития

Եվրասիական Զարգացման Բանկ
(ԵԱԶԲ)
Eurasian Development Bank (EDB)
www.eabr.org



European
Investment Bank

Եվրոպական Ներդրումային Բանկ (ԵՆԲ)
European Investment Bank (EIB)
www.eib.org



European
Investment Fund

Եվրոպական Ներդրումային Ֆոնդ
European Investment Fund (EIF)
www.eif.org



IBEC

INTERNATIONAL BANK
FOR ECONOMIC CO-OPERATION

Տնտեսական Համագործակցության
Միջազգային Բանկ (ՏՀՄԲ)
International Bank for Economic Coopera-
tion (IBEC)
www.ibec.int





KfW Զարգացման Բանկ –
միջնորդավորված (ԳՀՀԾԿԳ) հիմնարկի
KfW Development Bank- through (PMU GAF)
www.gaf.am



Կանաչ Կլիմայի Հիմնադրամ
Green Climate Fund (GCF)
www.greenclimate.fund



PCAF
Partnership for Carbon Accounting
Financials
www.carbonaccountingfinancials.com



UNEP FI
<https://www.unepfi.org/>



Greenly
<https://greenly.earth/en-gb>



BACEE
Կենտրոնական և Արեւելյան Եվրոպայի
Բանկերի Ասոցիացիա (BACEE)
Banking Association for Central and Eastern
Europe (BACEE)
www.baceeconference.com



Հայաստանի Վերականգնվող Էներ-
գետիկայի և Էներգախնայողության
Հիմնադրամ (ՀՎԷԷՀ)
Armenia Renewable Resources and Energy
Efficiency Fund (R2E2)
www.r2e2.am



Բնակարան երիտասարդներին ՎԿԿ ՓԲԸ
Home for Youth RCO CJSC
www.hfy.am



Ազգային Հիփոթեքային Ընկերություն
ՎԿԿ ՓԲԸ
National Mortgage Company RCO CJSC
(NMC)
www.nmc.am



Հայաստանի Արտահանման Ապահո-
վագրական Գործակալություն (ՀԱԱԳ)
Export Insurance Agency of Armenia (EIAA)
www.eia.am



«ՖԻՆԱՐՄ» Ֆինանսական Շուկայի
Մասնակիցների Ասոցիացիա
“FINARM” Financial Market Members
Association
www.finarm.am

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անվանում՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Լիցենզիա՝ Բանկային գործունեության լիցենզիա թիվ 84
Տրված է՝ ՀՀ ԿԲ կողմից 25.02.2005թ.

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Վ. Սարգսյան 10
ՀՎՀՀ՝ 02574955
ԿԲ թղթակցային հաշիվ՝ 103002102509

SWIFT կոդ՝ ARSJAM22
Reuters կոդ՝ ARSJ, ARSI
Bloomberg կոդ՝ ASWI



Հեռախոս՝

(+ 374) 60 757 000
(+ 374) 11 757 000



Էլ-փոստ՝

info@armswissbank.am



Կայք էջ՝

www.armswissbank.am
www.armswissbank.com



Սպասարկման

Ժամեր՝

9:30-16:30

**ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍՎԿՈՒՄ Է
ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՅ**

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ



ARM SWISS BANK